

Դիմորդը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության գործընթացի կազմակերպման և անցկացման համար, տվյալ Հաստատությունում նախապես վճարում է 1000 (հազար) ՀՀ դրամ:

Դիմորդը՝ Հաստատության ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի) հետ ներկայացնում է՝

1. Դիմում,
2. 4 լուսանկար (3x4 չափսի),
3. Կրթության մասին փաստաթղթի բնագիրը և պատճենը,
4. Անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, ծննդյան վկայական) բնագիրը և պատճենը,
5. Անձը հաստատող փաստաթղթի նոտարական թարգմանությունը (Արտերկրացիների համար),
6. Ծնողի կամ օրինական ներկայացուցչի անձնագրի բնագիրը և պատճենը, (անչափահաս լինելու դեպքում),
7. Տեղեկանք բնակության վայրից,
8. Կցագրման վկայական (16 տարեկանը լրացած արական սեռի դիմորդների համար),
9. Տեղեկանք տեղամասային պոլիկլինիկայից առողջական վիճակի վերաբերյալ,
10. Միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաների, փառատոնների) դիպլոմները (առկայության դեպքում),